

տուլթեան սուրը մահացու վիրաւորեր էր անոր մեծ սիրտը: Եւ 'ի լրումն իր թշուառութեանցը, կինն Լ'նտոնինա, զոր սերտ և սեռն սիրով սիրեր էր, անարժան ամուսին այսպիսի երեւելի զօրավարի մը, անպարկեշտ (վեռոգ) րայի խորհրդովը սկսաւ անառակութեան տալ ինքը զինքը: Լ'յսպիսի ընտանեկան անպատուութեան մէջ, չէր կրնար Լ'եղիսարիոս երկար ապրիլ. մեռաւ սրտին ցաւէն 'ի Խոստանդուպօլիս յամին 565 մարտի 23, վաթսուն տարեկան, Յոստինիանոսին մահուանէն ինը ամիս առաջ: Լ'պերախտ կայսրը և ոչ հոգ տարաւ փառաւոր թաղումն ընելու այնպիսի մեծ զօրավարի մը, որ կայսերութիւնը բարբարոսաց ձեռքէն ազատեր էր: Եւ հինաւուրց զինւորակիցները զինքը գերեզման դրին. իսկ Լ'եղիսարիոս երբ անոր մահը լսեց, ցաւագին կերպով ըսաւ.

«Իմ հաւատարմագոյն բարեկամն կորսնցուցի. և թէ որ տակաւին Լ'անդալաց թագաւորն ըլլայի, Յոստինիանոսը իր գահուն վրայ կը դողացնէի»:

Լ'եղիսարիոսի կենաց վերջի տարիներուն վրայ շատ մը առասպելներ կը պատմուին, որոնք բոլորն ալ սուտ են: Եւրսեն թէ աշուրները փորեցին, և Խոստանդուպօլսոյ փողոցներուն մէջ դռնէ դուռն իր հացը կը մուրար: Լ'յս առասպելս շատ բանաստեղծական է, և ամենուն ծանօթ. վասն զի արձանագործ, բանաստեղծք, նկարիչք և քանդակողք այս բանիս յիշատակը ազգաց մէջ անմահացուցած են: Լ'յս եղերական պատմութիւնը Յովհաննէս Լիտեսիաս՝ երկոտասաներորդ դարուն վիպագիրն հնարեր է. բայց ժամանակակից պատմագիրք այս բանիս վրայ ամենեւին յիշատակութիւն մը չեն ընեն: Հաւանական կ'երեւայ թէ Լ'եղիսարիոսի թշուառութիւնը՝ այս պատմագիրը շփոթած ըլլայ Յովհաննէս կապագովկացի, պրետորեան գնդին հրամանատարին թշուառութեանը հետ, որ կապուտներուն և կանաչներուն կուսակցութեանցը զոհ եղաւ:

Եւ մնայ հիմա խօսիլ Յոստինիանոսի ժամանակ Խոստանդուպօլսոյ մէջ եղած հասարակաց շինութեանցը վրայ: Լ'յս կայսրը որմնագիր ծներ էր, և ճարտարապետութեան մեծ եռանդն ունէր, զոր ուսաւ չափաբերական սկզբամբք: Պրոկոպիոս պատմագիրը վեց ընդարձակ գիրք կ'ընծայէ ստորագրելու համար Յոստինիանոսի շինել տուած քաղաքները, պատուարները, ամրոցները, կամուրջները բաղնիքները, ջրչեղջները, ջրանցքները, պալատները, եկեղեցիները ու վանքերը: Յոստինիանոս այս վիթխարի շէնքերուն համար, որոնք վեցերորդ դարուն անկիրթ ճաշակին համեմատ շինուած էին, սպառեց Լ'նաստասայ բոլոր դիզած գանձերն, Լ'եղիսարիոսի իր յաղթանակներէն ձեռք բերած հարստութիւնքն, թող նաև այն ծանր տուրքերն որոնցմով ամբողջ իր թագաւորութեան ժամանակը բոլոր ժողովուրդներն ընկձեց:

Կը շարունակուի:

Անտովոր տեսարան մը:

Լ'ստորիոյ մէջ նոր պատահած ջրերու ողողմանց մէջ, տեղ մը ջուրն այնպէս արագաբար ցածցեր է որ Լ'անուբի մեծ ձկները չեն կրցած ջրին արագութեանը հասնիլ ու ցամաքը մնացեր են, գեղացիք ալ ձկնորսութեան ելեր են դաշտերը: Լ'յս ձկանցս մէջ հատ մը 46 լիպրէ կշուեր է: Չմեռնելը թմրող կենդանիք արթնցեր են, և մեծամեծ օձեր տեսնուեր են՝ դէպ 'ի դաշտերը փախչելով: